

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31.10.2015թ.

ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2005թ.-ի մարտի 18-ին հաստատված «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգի» ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնակարգի հաստատումը: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
2. 2012թ.-ի փետրվարի 28-ի գիտխորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների կանոնադրությունների ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնադրությունների հաստատումը: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2016-2020թթ. նախագծի քննարկում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
4. Նոր կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու մասին /Զեկուցող Ս.Յ. Դավթյանյան/
5. Ընթացիկ հարցեր:

- I. Գարիկ Մկրտչյանին ԵՊՀ գիտխորհրդում դոցենտի գիտական կոչման երաշխավորելու հարցի քննարկում:
- II. ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:
- III. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին:
- IV. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին:
- V. ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործառույթան կանոնակարգի հաստատման մասին:
- VI. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ հարցման կանոնակարգի հաստատման մասին:
- VII. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողների անձնական տվյալների մշակման և պահպանման կարգի հաստատման մասին:
- VIII. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ընդունելության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգի հաստատման մասին:
- IX. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքացիական պաշտպանության շտաբի կանոնադրությունը հաստատելու մասին:
- X. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման

կանոնակարգում փոփոխություն կատարելու և համապատասխան հանձնաժողով կազմելու մասին:

- XI. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու նպատակով հանձնաժողով կազմելու մասին:
- XII. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների, տեքստի և երաժշտության ստեղծագործման նպատակով հանձնաժողով կազմելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2005թ.-ի մարտի 18-ին հաստատված «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգի» ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնակարգի հաստատումը հարցի կապակցությամբ ԵՊՀ Իմ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ -ի կարգավիճակի փոփոխության ՀՀ կառավարության 2014թ.-ի նոյեմբերի 22-ի որոշմուն հետ կապված, խնդիր է առաջացել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2005թ.-ի մարտի 18-ին հաստատված «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգի» ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնակարգի հաստատումը: Նշվեց, որ ներկայացված կանոնակարգի նախագծի վրա աշխատել են ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը և անձնակազմի կառավարման բաժնի (ԱԿԲ) վարիչ Ա. Հովհաննիսյանը: Նոր կանոնակարգը կազմվել է հիմք ընդունելով «ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգը» և ԵՊՀ ԻՄ-ի նոր կանոնադրությունը՝ հաստատված ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից 2015թ-ի ապրիլի 29-ին: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը նշեց, որ նախագծի վերաբերյալ դրական եզրակացությունն է տվել նաև ԵՊՀ Իմ-ի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովը:

Արտահայտվեցին – Ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը, գիտքարտուղար Մ. Աթոյանը և ԱԿԲ վարիչ Ա. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին նախագծին և առաջարկեցին հաստատել

Որոշեցին

Որոշում 12/1

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելված 1:
2. Ուժը կորցրած ճանաչել 2005թ. մարտի 18-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգը:

Լսեցին « 2012թ.-ի փետրվարի 28-ի գիտխորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների կանոնադրությունների ուժը կորցրած ճանաչելու և նոր կանոնադրությունների հաստատումը» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կազմում գործող բոլոր ֆակուլտետները՝ բնական գիտությունների, հումանիտար գիտությունների, կիրառական արվեստի և տնտեսագիտության համապատասխան գիտական խորհուրդներում քննարկել, ընդունել և ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել ֆակուլտետների կանոնադրությունները՝ հիմք ընդունելով ԵՊՀ ֆակուլտետի օրինակակալի կանոնադրությունը և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունը: Կանոնադրությունների քննարկումներին մասնակցել են նաև գիտքարտուղար Մ. Աթոյանը և անձնակազմի կառավարման բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը

Արտահայտվեցին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ֆակուլտետների գիտական խորհուրդներում ընդունված կանոնադրությունները և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին

Որոշում 12/2

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ.–ի փետրվարի 28-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը:

Որոշում 12/3

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ.–ի փետրվարի 28-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը:

Որոշում 12/4

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ.–ի փետրվարի 28-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունը:

Որոշում 12/5

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2012թ.–ի փետրվարի 28-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի կանոնադրությունը:

Լսեցին « ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2016-2020թթ. նախագծի քննարկում» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Կարևորելով ռազմավարական ծրագրի դերը և նշանակությունը ԵՊՀ ԻՄ –ի համար, տնօրենը ընդհանուր գծերով ներկայացրեց նախագիծը, կարևորելով այն հանգամանքը որ նախագծի մշակմանը մասնակցել են ԵՊՀ ԻՄ –ի բոլոր ստորաբաժանումները և ուսանողական կառույցները: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը առաջարկեց բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին առավել մանրակրկիտ ուսումնասիրել ներկայացված նախագիծը և տարեվերջին ներկայացնել առաջարկներ:

Արտահայտվեցին – տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին ռազմավարական ծրագրի նախագծի մշակման ուշադիր և կառուցողական մոտեցումը:

Որոշեցին

Որոշում 12/6

Տարեվերջյան ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի քննարկմանը ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2016-2020թթ. Նախագծը վերջնական տեսքով:

Լսեցին «Նոր կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը: Նա ներկայացրեց 101501.01.6 զբոսաշրջություն (2016-2020թթ.), 101501.01.06 զբոսաշրջություն (2016-2021թթ.), 021101.03.6 համակարգչային գրաֆիկա (2016-2020թթ.), 011.401.00.6 մասնագիտական մանկավարժություն (Կրթական ծրագիրը՝ 011401.16.6 նախնական գինվորական պատրաստություն) (2016-2020թթ.), 092301.00.6 սոցիալական աշխատանք (2016-2020թթ.), 011301.01.6 տարրական մանկավարժություն և մեթոդիկա (2016-2020թթ.), 011301.01.6 տարրական մանկավարժություն և մեթոդիկա (2016-2021թթ.)՝, մասնագիտություններով բակալավրի ուսուցման ուսումնական պլանների նախագծերը:

Արտահայտվեցին- Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված նախագծերին և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին

Որոշում 12/7

1. Հաստատել 101501.01.6 զբոսաշրջություն մասնագիտության 2016-2020թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 6-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/8

1. Հաստատել 101501.01.6 զբոսաշրջություն մասնագիտության 2016-2021թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 7-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/9

1. Հաստատել 021101.03.6 համակարգչային գրաֆիկա մասնագիտության 2016-2020թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 8-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/10

1. Հաստատել 011.401.00.6 մասնագիտական մանկավարժություն մասնագիտության 2016-2020թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 9-ի:

2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/11

1. Հաստատել 092301.00.6 սոցիալական աշխատանք մասնագիտության 2016-2020թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 10-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/12

1. Հաստատել 011301.01.6 տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2016-2020թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 11-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Որոշում 12/13

1. Հաստատել 011301.01.6 տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2016-2021թթ. բակալավրի ուսուցման ուսումնական պլանը համաձայն հավելված 12-ի:
2. Ներկայացնել ՀՀ ԿԳՆ լիցենզավորման:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և և գրականության ամբիոնի ասիստենտ Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին ԵՊՀ գիտխորհրդում դրոցենտի գիտական կոչման համար երաշխավորելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի զեկույցը:

Զեկուցողը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը 2015թ. հոկտեմբերի 17-ի նիստում քննարկել է հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Գվիղոնի Մկրտչյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով, որ նրա գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, նրան երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար դիմել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ Գ. Գ. Մկրտչյանին շնորհել դոցենտի գիտական կոչում: Այսպիսով, հիմք ընդունելով հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015թ. հոկտեմբերի 17-ի նիստի որոշումը և ԵՊՀ ԻՄ գիտխորհրդին կից մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ կարելի է պնդել, որ Գ. Գ. Մկրտչյանի տվյալները համապատասխանում են ԲՈՀ-ի կողմից դոցենտի գիտական կոչման ներկայացվող պահանջներին, և կարելի է երաշխավորել ԵՊՀ գիտխորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար անհրաժեշտ գործընթացին մասնակցելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ. դոցենտ Վ. Ալեքսանյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը:

Արտահայտվողները նշեցին, որ Գ. Գ. Մկրտչյանի գիտամանկավարժական բարձր որակի և հմտության անառարկելի

վկայություններից մեկն էլ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ անցկացված ուսանողական հարցումներն են, որի բոլոր տարիների միջինը կազմում է 4,12 բալ, և առաջարկեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին երաշխավորել ԵՊՀ գիտխորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հաշվի առնելով, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզու և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին՝

Որոշեցին

Որոշում 12/14

1. Երաշխավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար,
2. միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին շնորհել

դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով
դիմել ՀՀ ԲՈՀ:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կազմում փոփոխություններ
կատարելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 12/15

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
մեթոդական խորհրդի փոփոխված կազմը համաձայն հավելված 13-ի:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման
հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 12/16

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի փոփոխված
կազմը համաձայն հավելված 14-ի:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման
հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին
հարցը:

Որոշեցին

Որոշում 12/17

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի փոխված
կանոնակարգը համաձայն հավելված 15-ի:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործառույթան կանոնակարգի հաստատման մասին:

Որոշեցին

Որոշում 12/18

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործառույթան կանոնակարգը համաձայն հավելված 16-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ հարցման կանոնակարգի հաստատման մասին:

Որոշեցին

Որոշում 12/19

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ հարցման կանոնակարգը, համաձայն հավելված 17-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողների անձնական տվյալների մշակման և պահպանման կարգի հաստատման մասին:

Որոշեցին

Որոշում 12/20

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողների անձնական տվյալների մշակման և պահպանման կարգը համաձայն հավելված 18-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ընդունելության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգի հաստատման մասին:

Որոշեցին

Որոշում 12/21

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում ընդունելության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգը համաձայն հավելված 19-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքացիական պաշտպանության շտաբի կանոնադրությունը հաստատելու մասին:

Որոշեցին

Որոշում 12/22

Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի քաղաքացիական պաշտպանության շտաբի կանոնադրությունը համաձայն հավելված 20-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություն կատարելու և համապատասխան հանձնաժողով կազմելու մասին:

Որոշեցին

Որոշում 12/23

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման մասին կանոնակարգում փոփոխություններ կատարելու նպատակով կազմել հանջնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ

- **Առաքելյան Սամվել Արշավիրի**, մասնաճյուղի տնօրեն,

Հանձնաժողովի նախ. տեղակալ

- **Դավթյան Արկաղի Ցուլակի**, ուսումնամեթոդական վարչության պետ,

Հանձնաժողովի անդամներ

- **Առուշանյան Նաիրա Մուրենի**, ՈԻՄՎ ուսումնական գործընթացի պլանավորման և վերահսկման բաժնի վարիչ,

- **Մխիթարյան Մելանյա Մեսրոպի**, գլխավոր հաշվապահ,

- **Հովսեփյան Ռազմիկ Արմենի**, ուս.խորհրդի նախագահ:

2. Սույն որոշման պահանջների կատարման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես գալ մասնաճյուղի տարեվերջյան գիտխորհրդի նիստում:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու նպատակով հանձնաժողով կազմելու մասին:

Որոշեցին

Որոշում 12/24

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու նպատակով կազմել հանջնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ

- **Առաքելյան Սամվել Արշավիրի**, մասնաճյուղի տնօրեն,

Հանձնաժողովի նախ. տեղակալ

- **Հովհաննիսյան Ալբերտ Սարգսի**, ԱԿ բաժնի վարիչ,

Հանձնաժողովի անդամներ

իրավախորհրդատու,

- **Դավթյան Արկադի Ցոլակի**, ուսումնամեթոդական վարչության պետ,
- **Մխիթարյան Մելանյա Մեսրոպի**, գլխավոր հաշվապահ,
- **Խուդավերդյան Նելլի Բարկենի**, տնտեսագիտության Ֆակուլտետի դեկան,
- **Ալեքսանյան Վարդան Արամայիսի**, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան,
- **Մարգարյան Ալեքսան Շամիլի**, կիրառական արվեստի Ֆակուլտետի դեկանի ժ/պ,
- **Զաքարյան Մանվել Աշոտի**, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ,
- **Զուրաբյան Մարատ Հովհիկի**, հեռակա ուսուցման բաժնի վարիչ:

2. Սույն որոշման պահանջների կատարման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես գալ մասնաճյուղի տարեվերջյան գիտխորհրդի նիստում:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների, տեքստի և երաժշտության ստեղծագործման նպատակով հանձնաժողով կազմելու մասին:

Որոշեցին

Որոշում 12/25

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների, տեքստի և երաժշտության ստեղծագործման նպատակով կազմել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ

- **Առաքելյան Մամվել Արշավիրի**, մասնաճյուղի տնօրեն,

Հանձնաժողովի նախ. տեղակալ

- **Հովհաննիսյան Ալբերտ Մարգարի**, ԱԿ բաժնի վարիչ,

Հանձնաժողովի անդամներ

- **Մարգարյան Ալեքսան Շամիլի**, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ, արհրյուրոյի նախագահ,

- **Ասատրյան Համլետ Միհրդատի**, կիրառական արվեստի ֆակուլտետի դոցենտ,

- **Մարիատյան Աիդա Ասիլբեկի**, հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ,

- **Հովսեփյան Ռազմիկ Արմենի**, ուս.խորհրդի նախագահ:

2. Հանձնարարել հանձնաժողովի անդամներին՝ սեղմ ժամկետում ներկայացնել առաջարկություններ մասնաճյուղի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի նախագծի տեքստի և էսքիզների վերաբերյալ:

3. Սույն որոշման պահանջների կատարման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես գալ մասնաճյուղի տարեվերջյան գիտխորհրդի նիստում:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Մ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

31.10.2015թ.